ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

20.10.2018թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկան/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Հ. Մարգարյանը, Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Տ. Թամրազյանը, Ս. Վարդումյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Մադաթյանը, ՈՒԳԸ նախագահ Տ. Թիրաբյանը, Մ. Մելիքսեթյանը, Ա. Ղարախանյանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Գ. Ավետիսյանը, բացելով նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի 2017-2018 ուս. տարվա տարեկան քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում /Զեկ. Գ Ավետիսյան/:
2. Ֆակուլտետի կանոնադրության վերանայման և բարեփոխման առաջարկությունների քննարկում /Զեկ. Գ Ավետիսյան/:
3. 2018-2019 ուս. տարում իրականացվող պրակտիկաների ծրագրերի, պլան-ժամանակացույցերի քննարկում /Զեկ. Ա. Ալեքսանյան, Ա. Ուլիխանյան/:
4. 2018-2019 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակների հաստատում /Զեկ. Գ Ավետիսյան/:
5. Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցերի քննարկում /Զեկ. Ա.Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
6. Ընթացիկ հարցեր
   6.1 Իրականացված լրացուցիչ պրակտիկաների /internship/ արդյունքների մասին /Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

6.2 Ֆակուլտետի աշխատակիցների ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն այցելություն:

6.3 Տնտեսագիտության ֆակուլտետի արհեստակցական միության նախագահի ընտրության կազմակերպում /Զեկ. Գ Ավետիսյան/:

6.4 ԵՊՀԻՄ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին համապատասխան Ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի ձևավորման մասին: /Զեկ. Գ Ավետիսյան/

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին - Ֆակուլտետի 2017-2018 ուս. տարվա տարեկան քննաշրջանի արդյունքների մասին :

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2017-2018 ուս. տարվա տարեկան քննաշրջանի արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը սկսելուց առաջ ամբիոնները ԿԾ ղեկավարների հետ համագործակցությամբ ուսումնասիրում են դասընթացների ծրագրերի կատարողականը, դասընթացների թեմատիկայի հարցաշարերի և տոմսերի համապատասխանելիությունը:

Նա նշեց, որ իրականացվել է 2017-2018 և 2016-2017 ուս. տարիների համար ըստ մասնագիտությունների համեմատական վերլուծություն: Որի արդյունքում երևում է, որ 2017-2018ուս. տարում 2016-2017 ուս. տարվա համեմատ առաջին կիսամյակում նկատվում է առաջադիմության անկում, իսկ երկրորդ կիսամյակում մի փոքր աճ: Առաջադիմության անկման պատճառ է հանդիսացել ուսանողների սեմինար-գործնական պարապմունքներին պասիվ մասնակցությունը և հաճախումները, ինչպես նաև ուսանողների թվի նվազումը: Ֆակուլտետում չունենք 12 կրեդիտ պարտք ունեցող ուսանողներ: Քննաշրջանը կազմակերպվել է համապատասխան ժամանակացույցերի: Լուծարքային շրջանում քննական պրոցեսները իրականցվել են հանձնաժողովներով:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Հ. Մարգարյանը:

Նրանք նշեցին, որ կրթական ծրագրերի ղեկավարները մասնակցել են քննաշրջանին: Այն անցկացվել է օբյեկտիվ և պատշաճ մակարդակով: Քննական արդյունքները պարտադիր քննարկվել են ուսանողների հետ: Քննական գործընթացները գրավոր չեն բողոքարկվել որևէ ուսանողի կողմից: Նրանք առաջարկեցին ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2017-18 ուս. տարվա քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

Որոշեցին – Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2017-2018 ուս. տարվա տարեկան քննաշրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին - Ֆակուլտետի կանոնադրության վերանայման և առաջարկությունների մասին:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետի կանոնադրությունը ունի վերանայման և բարեփոխման անհրաժեշտություն: Առաջարկեց ներկայացնել տեսակետներ:

Արտահայտվեցին - Ա. Պոտոսյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Սարիբեկյանը:

Ֆակուլտետի կանոնադրության վերանայման և բարեփոխման գաղափարին հավանություն տվեց Գ. Հովհաննիսյանը: Նա արձանագրեց, որ կանոնադրության մեջ կան կրկնություններ, որոնցից պետք է խուսափել: Մատնանշեց կանոնադրության մեջ առկա որոշ կետերի բացակայություն, մասնավորապես բացակայում է ֆակուլտետի դեկանի տեղակալի և գործավարի գործառույթները ներկայացնող կետը: Նա առաջարկեց գիտքարտուղարի պաշտոնը, որը մինչ այժմ եղել է հասարակական հիմունքներով, դարձնել վճարովի: Վճարովի դարձնելու դեպքում գիտքարտուղարի պաշտոնը կվարի ավելի կոմպետենտ և հանձնառու անձ, ով պատասխանատու կլինի խորհրդի փաստաթղթերի վարման և պահպանման համար: ԵՊՀԻՄ ֆակուլտետի կանոնադրության կետերը պետք է համապատասխանեն ԵՊՀ ֆակուլտետի կանոնադրության կետերին և չպետք է հակասեն իրար:

Մ. Միքայելյանը առաջարկեց, որ գիտքարտուղարի պաշտոնը զբաղեցնող անձը ընտրվի գիտախորհրդի անդամների կողմից:

Ա. Սարիբեկյանը առաջարկեց վերանայել դեկանի պաշտոնավարման ժամկետները: Նա նաև առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ, որը կզբաղվի կանոնադրական փոփոխություններով:

Կատարվեցին առաջարկություններ կանոնադրության մեջ փոփոխություններ իրականացնելու մասին/առաջարկությունների նախագծերը կցվում են/.

Որոշեցին- Կանոնադրության բարեփոխման վերաբերյալ մինչև 01.12.2018թ կազմել առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի քննարկմանը :

3. Լսեցին – 2018-2019 ուս. տարում իրականացվող պրակտիկաների ծրագրերի, պլան-ժամանակացույցերի քննարկման մասին:

Ա. Ուլիխանյանը ներկայացրեց պրակտիկայի անցկացման ժամանակացույցը, նպատակը, պրակտիկայի օբեկտները և այցելության վայրերը և դրանց համապատասխանությունը տվյալ մասնագիտության առանձնահատկություններին:

Ա. Ուլիխանյանը նշեց, որ երկու մասնագիտությունների գծով նախատեսված է երեք պրակտիկա:

Ուսումնական-1՝ Զբոսաշրջություն, առաջին կուրս,
Ուսումնական-2՝ Զբոսաշրջություն, երկրորդ կուրս,
Մասնագիտական՝ Սերվիս, երրորդ կուրս
Պրակտիկայի օբեկտներ են հանդիսանում բնական և մարդածին հուշարձանները, զբոսաշրջային դեստինացիաները և ենթակառուցվածքները:

Ա. Ալեքսանյանը ներկայացրեց Տնտեսագիտություն մասնագիտության պրակտիկայի անցկացման ժամանակացույցը: Նա խոսեց պրակտիկայի նպատակների և դրանց կազմակերպման վայրերի մասին: Ա. Ալեքսանյանը նշեց, որ որպես սկզբունք է ընտրվել ավարտական աշխատանքների թեմաների և պրակտիկայի վայրերի առավել համապատասխանեցումը:

Ա. Ալեքսանյանը նշեց, որ Ֆինանսներ ԿԾ-ում պրակտիկա նախատեսված է մեկ անգամ, որը բավարար չէ այս մասնագիտության ուսանողների մոտ գործնական կարողությունները և հմտությունները ամրապնդելու համար

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Լ. Մադաթյանը:

Լ. Մադաթյանը առաջարկեց Ֆինանսներ մասնագիտության պրակտիկաների քանակը ավելացնել:

Որոշեցին –2019-23 Ֆինանսներ կրթական ծրագրում ավելացնել պրակտիկաների /հիմնական և լրացուցիչ/ քանակը:

4. Լսեցին – 2018-2019 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակների հաստատման մասին:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ 2018 -2019 ուս. տարում ֆակուլտետի երկու մասնագիտությունների գծով նախատեսված ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել սեպտեմբերին: Որոշակի ճշգրտումներից հետո, ամբիոններում կատարվել է ավարտական աշխատանքների բաշխում ըստ դասախոսների և ուսանողների:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհանիսյանը:

Նրանք նշեցին, որ ամբիոնների նիստերում քննարկվել և ճշգրտվել են ավարտական աշխատանքի թեմաները հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերում հաստատվել է ավարտական աշխատանքների ցանկերը ըստ ղեկավարների և ուսանողների ու ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը/նախագծերը կցվում են/:

Արտահայտվեցին - Տ. Թամրազյանը, Ա. Պոտոսյանը:

Նրանք նշեցին, որ ավարտական աշխատանքների բաշխվածությունը իրականացվում է ճիշտ ընթացակարգով: Ավարտական աշխատանքների բաշխվածությունը իրականացվել է ըստ ուսանողների կարողությունների: Հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել:

Որոշեցին – հաստատել ֆակուլտետի երկու մասնագիտությունների 2018-19 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:

5. Լսեցին – Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցերի քննարկման մասին:

Ա. Սարիբեկյանը նշեց, որ ֆակուլտետում գործում են մի շարք մեխանիզմներ ուսանողների կրթական կարիքների վերհանման համար/հարցումներ, արագ արձագանքման արկղ, պարբերաբար հանդիպումներ ԿԾ պատասխանատուի, խորհրդատուի հետ/:

Ա. Սարիբեկյանը /կրթական ծրագրի պատասխանատու/ նշեց ակտիվ կապը ուսանողների հետ: Սակայն նա մտահոգություն հայտնեց ուսանողների ավելի ազատ լինելու խնդրին: Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցի վերաբերյալ կրթական ծրագրի պատասխանատուն նշեց, որ ունենք պայմանավորվածություն երկու դասախոսությունների կազմակերպում արտաքին շահակիցների հետ:
ԿԾ պատասխանատուն բարձրացրեց դասընթացի փաթեթների հարցը և նշեց, որ դրանք հանդիսանում են ոչ միայն դասախոսի ուղեցույցը, ինչպես նաև ուսանողի:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Տ. Թիրաբյանը:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ պարտադիր է դասընթացի փաթեթների առկայությունը, բայց ավելի հակիրճ: Առաջարկեցին դրամական խրախուս տրամադրել՝ երաշխավորված դասընթացի փաթեթների հեղինակներին:

Որոշեցին – հետևողական լինել ուսանողների կրթական կարիքներին և տալ համապատասխան լուծումներ:

6. Լսեցին - Ընթացիկ հարցեր

6.1. Իրականացված լրացուցիչ պրակտիկաների /ինտերշիփ/ արդյունքների մասին: /Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/

6.2. Ֆակուլտետի աշխատակիցների ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական այցելության մասին:
6.3. Տնտեսագիտության ֆակուլտետի արհեստակցական միության նախագահի ընտրության կազմակերպում:/Զեկ. Գ Ավետիսյան/
6.4. ԵՊՀԻՄ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին համապատասխան Ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի ձևավորման մասին: /Զեկ. Գ Ավետիսյան/

6.1. Ա. Սարիբեկյանը ներկայացրեց Տնտեսագիտություն մասնագիտության ուսանողների հետ Ֆոնդային բորսա /ՆԱՍԴԱՔ ՕԷՄԵՔՍ/ գնալու նպատակը:
Նման այց են կատարել նաև Սերվիս մասնագիտությամբ ուսանողների հետ՝ դեպի Գոշի լիճ, Պարզ լիճ և այլն: Նա նշեց, որ նմանատիպ այցերը իրենց բովանդակությամբ լրացուցիչ պրակտիկ գիտելիքների ստացումն է:
6.2. Գ. Ավետիսյանը ներկայացրեց ֆակուլտետի աշխատանկիցների այցը ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն պայմանավորված էր փոխշահավետ համագործակցության ստեղծմանն ու ամրապնդմանը: Կենտրոնի տնօրենի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց լրացուցիչ պրակտիկայի ացկացման, սեմինար քննարկումների իրականացման հարցերում:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Նրանք նշեցին, որ նմանօրինակ պրակտիկայի ացկացումը հնարավորություն է տալիս ուսանողին էլ ավելի ամրապնդնել իրենց գիտելիքները տվյալ ոլորտում:

6.3. Գ. Ավետիսյանը ներկայացրեց Պ. Ասիլբեկյանին որպես ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ:

Արտահայտվեց - Գ. Հովհաննիսյանը:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ Պ Ասիլբեկյանը պարտաճանաչ կատարել է իր պարտականությունները այդ պաշտոնում և առաջարկեց վերընտրել:

Որոշեցին - Հավանություն տալ Պ. Ասիլբեկյանի թեկնածությունը ֆակուլտետի արհեստակացական միության նախագահի պաշտոնում :

6,4 Գ. Ավետիսյանը ներկայացրեց ԵՊՀ ԻՄ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին համապատասխան՝ ֆակուլտետի գիտխորհրդից անհրաժեշտ է ձևավորել մրցութային հանձնաժողով:

Ձևավորման համար կազմակերպվել է հարցում և ընտրվել է հետևյալ կազմը.

1. Սարիբեկյան Անուշ Աղաջանի- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս, «Ֆինանսներ» կրթական ծրագրի պատասխանատու,
2. Ալեքսանյան Անժելա Գրիտելի -Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար,
3. Ասիլբեկյան Պավել Նորիկի - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
4. Ուլիխանյան Ալինա Վոլոդյայի - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի պատասխանատու:

Որոշեցին- Հաստատել մրցութային հանձնաժողովի կազմը:

Գիտխորհրդի նախագահ՝ ***Գ. Ավետիսյան***

Քարտուղար՝ ***Ա.Ալեքսանյան***